Հավելված 10

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի

2007 թվականի հուլիսի 10-ի
թիվ 205 Ն որոշմամբ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի
2007 թվականի ________ __-ի
թիվ ____ Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

----------------------- Տիգրան Սարգսյան
2007 թվականի հուլիսի 17

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների և էկոնոմիկայի նախարար՝

---------------------- Վարդան Խաչատրյան
2007 թվականի

# ԲԱՆԿԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները (այսուհետ՝ հրահանգ) կիրառվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի (այսուհետ՝ բանկեր) կողմից՝ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները կազմելիս:

1.2 Բանկերի ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն նրանց բոլոր տարածքային ստորաբաժանումների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ցուցանիշները:

1.3 Հաշվետու տարի է համարվում տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

1.4 Նոր ստեղծված բանկերի համար առաջին հաշվետու տարի (ժամանակաշրջան) է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում նրանց գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա (ժամանակաշրջանի) վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

1.5 Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջան է համարվում հունվարի 1-ից մինչև եռամսյակային միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

1.6 Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կազմվում են աճողական կարգով: Միջանկյալ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (ձև 6) միաժամանակ ցույց են տրվում նաև տվյալ ընթացիկ հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի տվյալները: Բանկերը կազմում են միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ եռամսյակը մեկ անգամ:

1.7 Լուծարվող բանկը կազմում է ֆինանսական հաշվետվություններ տարեսկզբից մինչև դատարանի կողմից բանկի սնանկության մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դիմումը բավարարելու մասին որոշման կայացումը (լուծարման գործընթացի սկիզբն) ընկած ժամանակաշրջանի համար:

1.8 Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են վերլուծական (անալիտիկ) և ընդհանրացված (սինթետիկ) հաշվառման տվյալների հիման վրա:

1.9 Բանկերը, ելնելով ներկայացվող տեղեկատվության էականությունից, իրենց հայեցողությամբ կարող են ավելի մանրամասնել ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց կից ծանոթագրությունները՝ պահպանելով ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ նաև՝ ՖՀՄՍ) և սույն հրահանգով սահմանված պահանջները և ներկայացման ենթակա պարտադիր հոդվածները:

1.10 Բանկերը կարող են խտացնել ֆինանսական հաշվետվությունների ձևերը, եթե ներկայացման ենթակա հոդվածում արտացոլվելիք գումարները (և՛ ընթացիկ, և՛ նախորդ ժամանակաշրջանների համար) 0-ական են կամ ոչ էական են:

1.11 Ֆինանսական հաշվետվությունների համապատասխան հոդվածները մանրամասնվում են կից ծանոթագրություններում՝ ըստ սույն հրահանգի: Ընդ որում, բանկերը կարող են խտացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում արտացոլված հոդվածները, եթե ներկայացման ենթակա հոդվածում արտացոլվելիք գումարները (և’ ընթացիկ, և’ նախորդ ժամանակաշրջանների համար) 0-ական են:

1.12 Ֆինանսական հաշվետվություններում տվյալները ցույց են տրվում հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի: Ֆինանսական հաշվետվություններում փակագծերում ցույց տրված գումարները թվաբանական գործողություններում դիտվում են որպես բացասական թվեր, ընդ որում, եթե փակագծից առաջ դրված է հանման («-») նշան, ապա փակագծում գրված թիվը գումարվում է:

1.13 Ֆինանսական հաշվետվությունները ունեն հետևյալ պարտադիր վավերապայմանները՝

1) անվանումը,

2) հաշվետու ամսաթիվը կամ ժամանակաշրջանը, որի համար կազմված է հաշվետվությունը,

3) բանկի անվանումը,

4) գլխամասային գրասենյակի գտնվելու վայրը,

5) թվային ցուցանիշների ներկայացման չափսը (ֆորմատը),

6) ֆինանսական հաշվետվությունների վավերացման օրը,

7) ֆինանսական հաշվետվությունները վավերացնող պատասխանատու անձանց պաշտոնների անվանումը, այդ անձանց անունները և ստորագրությունները:

Ֆինանսական հաշվետվությունները հրապարակելիս պահանջվող վավերապայմանները պետք է արտացոլվեն բոլոր հաշվետվական ձևերի մեջ առանձին:

1.14 Բանկի ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է բանկի ղեկավարության հայտարարությունը՝

1) բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման իր պատասխանատվության վերաբերյալ, այն է՝

ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

բ. հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,

գ. ՖՀՄՍ պահանջների պահպանման, իսկ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,

դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

ե. ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար, եթե բանկի ղեկավարությունը մտադիր չէ կամ պատճառ չունի դիտարկելու բանկը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը:

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար, իսկ նշված նվազագույն պայմաններին չհամապատասխանելու դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից այդ թերությունների բացահայտման համար,

3) բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ՖՀՄՍ-ներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,

4) բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Վերոնշյալ հայտարարությունը վավերացվում է բանկի տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրությամբ:

1.15 Ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է բանկի ֆինանսական հաշվետվությունների՝ ՖՀՄՍ-ներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին համապատասխանության վերաբերյալ բանկի հավաստիացումները (տարեկան ֆինանսական հաշվետվությունների դեպքում՝ բանկի խորհրդի հավաստիացումը՝ համապատասխան վավերացմամբ): Ընդ որում, ֆինանսական հաշվետվությունները չեն կարող որակավորվել հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող, եթե դրանք չեն բավարարում կիրառվող յուրաքանչյուր ստանդարտի բոլոր պահանջներին, և ստանդարտներից բխող հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին, բացառությամբ ՖՀՄՍ-ներով նախատեսված դեպքերի:

1.16 Բանկերը տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացնում են բանկի ներքին աուդիտի պատրաստած և բանկի խորհրդի կողմից հաստատված եզրակացությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ՝ բացահայտելով առկա թերությունները: Ընդ որում, արտաքին աուդիտը պետք է հաստատի բանկի կողմից իր ներքին հսկողության համակարգին տրված գնահատականի ճշտությունը:

1.17 Բանկերը տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացնում են նաև բանկի կողմից պատրաստված (բանկի առնվազն երկու խորհրդի անդամի կողմից ստորագրված) ֆինանսական վերլուծություն, որը նկարագրում և մեկնաբանում է բանկի ֆինանսական գործունեության և ֆինանսական վիճակի հիմնական բնութագրերը, ինչպես նաև գործունեության ընթացքում առաջացած հիմնական անորոշությունները: Նման զեկույցը ներառում է հետևյալ վերլուծությունները և մեկնաբանումները.

1) գործունեության վրա ազդող հիմնական գործոնները, ներառյալ կազմակերպության գործունեության միջավայրի փոփոխությունները, կազմակերպության կողմից այդ փոփոխություններին և դրանց հետևանքներին արձագանքելու եղանակը, ինչպես նաև գործունեության մակարդակը պահպանելուն, ամրապնդելուն և զարգացնելուն ուղղված ներդրումային, այդ թվում՝ շահութաբաժինների վճարման քաղաքականությունը,

2) բանկի ֆինանսավորման աղբյուրները, սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցության և բանկի գործառնությունների հետ կապված ռիսկերի կառավարման քաղաքականությունները,

3) բանկի այն արժանիքները և միջոցները, որոնց արժեքը, Հայաստանի Հանրապետության ՖՀՄՍ-ների համաձայն, չի արտացոլվում հաշվապահական հաշվեկշռում:

1.18 Ռիսկերի քանակական և որակական բնութագրերը կարող են ներկայացվել բանկի տարեկան ֆինանսական հաշվետվություններում կամ ներառվել տարեկան հաշվետվության որևէ այլ բաժնում (օրինակ՝ ղեկավարության զեկույցում կամ ռիսկերի վերաբերյալ հաշվետվության մեջ), իսկ ֆինանսական հաշվետվություններում հղում կատարել դրանց:

## ԳԼՈՒԽ 2. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները կազմվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) սկզբունքների համաձայն:

2.2 Բանկերի կողմից հրապարակվող տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝

1) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը՝ ձև թիվ 1 (հավելված 1),

2) ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ձև թիվ 2 (հավելված 2),

3) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը՝ ձև թիվ 3 (հավելված 3),

4) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը՝ ձև թիվ 4 (հավելված 4),

5) համապարփակ ֆինանսական հաշվետվությունների ձևերին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման վարման քաղաքականությունը՝ ձև թիվ 5 (հավելված 5):

2.3 Բանկերը տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացնում են նաև արտաքին աուդիտորական եզրակացությունը:

2.4 Ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում բանկը հրապարակում է համախմբված տարեկան ֆինանսական հաշվետվությունները: Բանկը կարող է իր տարեկան ֆինանսկան հաշվետվությունում ներառել նաև իր առանձին տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

2.5 Այն դեպքերում, երբ ՖՀՄՍ-ները պահանջում են տեղեկատվություն ներկայացնել ըստ ֆինանսական գործիքների տարբեր դասերի, բանկը պետք է ֆինանսական գործիքները խմբավորի ըստ դասերի՝ կապված բացահայտվող տեղեկատվության տիպից և ֆինանսական գործիքների բնութագրերից:

2.6 Բանկերը նախորդ տարիների էական սխալները, որոնք բացահայտվել են հաշվետու ժամանակաշրջանում, ճշգրտում են ՀՀՄՍ 8-ի համաձայն:

2.7 Համաձայն ՀՀՄՍ 8-ի, բանկերը ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում բացահայտում են արտասովոր (արտակարգ) հոդվածները, սովորական հոդվածների անսովոր դրսևորումները, ընդհատված գործառնությունները, հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունները, էական սխալները և հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները (դրանց բնույթը և եթե իրագործելի է՝ գումարի բացահայտումը), եթե դրանց արդյունքներն էական ազդեցություն ունեն ընթացիկ ժամանակաշրջանում, կամ ակնկալվում է, որ էական ազդեցություն կունենան հետագա ժամանակաշրջաններում:

2.8 Բանկը ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար չափումներ կատարելիս օգտագործում է այն տեղեկատվությունը, որն առկա է մինչև հաշվետվության ներկայացման համար վավերացումը:

2.9 Բանկերը հաշվապահական հաշվեկշռի հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերը, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվեկշռի հաշվետու ամսաթվին, բացահայտում են ՀՀՄՍ 10-ի համաձայն:

2.10 Հաշվետվությունների համապատասխան հոդվածները մանրամասնվում են կից ծանոթագրություններում` ըստ սույն հրահանգի:

## ԳԼՈՒԽ 3. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի համաձայն` բանկերը յուրաքանչյուր եռամսյակի համար կազմում են միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, որը ներառում է հետևյալ բաղկացուցիչները.

1) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն` ձև թիվ 6 (հավելված 6),

2) ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն` ձև թիվ 7 (հավելված 7),

3) սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն` ձև թիվ 8 (հավելված 8),

4) դրամական հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն` ձև թիվ 9 (հավելված 9),

5) միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերին կից ծանոթագրությունները` ներառյալ հաշվապահական հաշվառման վարման քաղաքականությունը` ձև թիվ 5 (հավելված 5):

3.2 Եռամսյակային միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կազմվում են ՀՀՄՍ 34-ով սահմանված ժամանակաշրջաններին համապատասխան:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին եռամսյակային միջանկյալ հաշվետվությունը (ձև թիվ 6) կազմվում է ընթացիկ միջանկյալ եռամսյա ժամանակաշրջանի համար և ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի համար (աճողական) և անմիջապես նախորդող ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան-ների (ընթացիկ և տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը) համար:

Եռամսյակային ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն (ձև թիվ 7) ընթացիկ միջանկյալ եռամսյակային ժամանակաշրջանի վերջի դրությամբ և անմիջապես նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ համեմատական հաշվապահական հաշվեկշիռն է:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին եռամսյակային միջանկյալ հաշվետվությունը (ձև թիվ 8) կազմվում է ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի համար (աճողական) և անմիջապես նախորդող ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի (տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը) համար:

Դրամական միջոցների հոսքերի մասին եռամսյակային միջանկյալ հաշվետվությունը (ձև 9) կազմվում է ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած

ժամանակաշրջանի համար (աճողական), և անմիջապես նախորդող ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի (տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը) համար:

3.3 Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են համախմբված հիմունքով, եթե բանկի ամենավերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունները եղել են համախմբված: Եթե բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունը ներառել է բանկի առանձին ֆինանսական հաշվետվությունները` ի լրումն համախմբված ֆինանսական հաշվետվությունների, ապա բանկը կարող է իր միջանկյալ հաշվետվությունում ներառել իր առանձին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

3.4 Սույն հրահանգում ներկայացված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում (ձև թիվ 5) համադրելի տեղեկատվությունը ներկայացված է ըստ «ընթացիկ ժամանակաշրջանի» և «Նախորդ ժամանակաշրջանի», սակայն միջանկյալ հաշվետվություններին կից ծանոթագրություններում համադրելի տեղեկատվությունը պետք է ներկայացվի ըստ համապատասխան ֆինանսական հաշվետվություններում ներառված միջանկյալ ժամանակաշրջանների: Օրինակ` միջանկյալ ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությանը կից ծանոթագրություններում պետք է ներկայացվի համադրելի տեղեկատվություն ըստ «Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի», «Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի (աճողական)», «Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի», «Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի (աճողական)» համար, ընդ որում, ներկայացվող տեղեկատվության համադրելիությունը պետք է կիրառվի նաև պատմողական և նկարագրական տեղեկատվության մեջ, երբ դա նպատակահարմար է ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները հասկանալու համար:

3.5 Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվում է հաշվապահական հաշվառման նույն քաղաքականությունը, որը կիրառվում է նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս` հաշվի առնելով հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ամենավերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո և պետք է արտացոլվեն հաջորդ տարեկան ֆինանսական հաշվետվություններում:

3.6 Համաձայն ՀՀՄՍ 8-ի` բանկերը միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում բացահայտում են արտասովոր (արտակարգ) հոդվածները, սովորական հոդվածների անսովոր դրսևորումները, ընդհատված գործառնությունները, հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունները, էական սխալները և հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները (դրանց բնույթը և եթե իրագործելի է` գումարի բացահայտումը, հետևանքները), եթե դրանց արդյունքներն էական ազդեցություն ունեն ընթացիկ ժամանակաշրջանում, կամ ակնկալվում է, որ էական ազդեցություն կունենան հետագա ժամանակաշրջաններում:

3.7 Բանկը միջանկյալ ժամանակաշրջանն արտացոլող ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար չափումներ կատարելիս օգտագործում է այն տեղեկատվությունը, որն առկա է

մինչև հաշվետվության ներկայացման համար վավերացումը և արտացոլում  նախորդ տարեկան ֆինանսական հաշվետվությունների կամ ընթացիկ հաշվետու տարվա նախորդ միջանկյալ հաշվետվություններում ներկայացված գումարների գնահատականներում հնարավոր փոփոխությունները. ընդ որում նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարները ենթակա չեն հետադարձ ճշգրտման, սակայն պահանջվում է, որ գնահատականներում ցանկացած էական փոփոխության բնույթը և գումարը բացահայտվի կից ծանոթագրություններում:

3.8 Բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պայմանավորված են հաշվապահական հաշվառման նոր ստանդարտների ընդունմամբ, այս քաղաքականության որևէ փոփոխություն, համաձայն ՀՀՄՍ 8 ստանդարտի հիմնական մոտեցման, պետք է արտացոլվի ընթացիկ հաշվետու տարվա նախորդ միջանկյալ ժամանակաշրջանների, ինչպես նաև նախորդ հաշվետու տարիների համադրելի միջանկյալ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացմամբ: Այնուամենայնիվ, եթե նախորդ հաշվետու տարիներին վերաբերող ճշգրտման գումարը խելամտորեն որոշելի չէ, ապա նոր քաղաքականությունը կիրառվում է առաջընթաց, սակայն փաստն անպայմանորեն բացահայտվում է կից ծանոթագրություններում:

3.9 Ֆինանսական տարվա ընթացքում սեզոնայնորեն, ցիկլայնորեն կամ պատահաբար ստացվող եկամուտները, ինչպես նաև անհավասարաչափ ծախսումները նախապես չեն ճանաչվեն կամ հետաձգվում միջանկյալ ամսաթվի դրությամբ, այլ ճանաչվում են ըստ առաջացման, եթե նախապես ճանաչումը կամ հետաձգումը նպատակահարմար չէ հաշվետու տարվա վերջի դրությամբ:

## ԳԼՈՒԽ 4. ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 1) տարեկան հաշվետվության 3-րդ և 4-րդ սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, հաշվետու և նախորդ ժամանակաշրջանի տվյալները: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6) միջանկյալ հաշվետվությունում, 2-րդ սյունակում,  լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի տվյալները, 5-րդ սյունակում՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի տվյալները, 3-րդ սյունակում՝ հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի տվյալները՝ աճողական կարգով, 6-րդ սյունակում՝ նախորդ տարվա նույն համեմատական տվյալները:

4.2 Հանապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6) 1-ին եռամսյակի համար ներկայացվող միջանկյալ հաշվետվության 4-րդ և 6-րդ սյունակները չեն լրացվում և չեն հրապարակվում:

4.03 կետն ուժը կորցրել է 20.03.12թ. թիվ 68 Ն որոշմամբ

4.4 Բանկը իր ցանկությամբ կարող է «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (միջանկյալ) հաշվետվության» փոխարեն պատրաստել «Ֆինանսական արդյունքների մասին (միջանկյալ) հաշվետվություն» և «Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (միջանկյալ)

հաշվետվություն»: Հաշվետվությունները լրացվում են նույն սկզբունքով, ինչ որ «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»-ը:

## ԳԼՈՒԽ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Տարեկան ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (ձև թիվ 2) 3-րդ սյունակում լրացվում են հաշվետու ֆինանսական տարվա վերջի տվյալները, 4-րդ սյունակում՝ նախորդող ֆինանսական տարվա վերջի տվյալները: Միջանկյալ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (ձև թիվ 7) 3-րդ սյունակում լրացվում են ընթացիկ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջի տվյալները, 3-րդում՝ անմիջապես նախորդող ֆինանսական տարվա վերջի տվյալները:

5.2 Կից աղյուսակում ներկայացված են հաշվետվության և դրան համապատասխան կից ծանոթագրության կետերում ներառվող հաշվապահական հաշվառման հաշվային պլանի այն հաշիվները, որոնց մնացորդները պետք է արտացոլվեն տվյալ հոդվածում: Հնարավոր են դեպքեր, երբ որոշակի գումարները պատկանում են կոնկրետ հոդվածներին, սակայն համապատասխան հաշվային պլանի հաշիվները նշված չեն: Այդ դեպքում գումարն արտացոլվում է ըստ հոդվածին համապատասխանելիության, և նման դեպքերը սույն հրահանգով խախտում չեն համարվի:

5.3 Եթե առկա են տարբերություններ Կենտրոնական բանկի կողմից բանկերի համար հաստատված ակտիվների հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի և ՖՀՄՍ-ներով ամրագրված ակտիվների հնարավոր կորուստների ձևավորման մոտեցումների միջև, ապա ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀՀՀՍ-ների պահանջներով, սակայն պարտադիր բացահայտել (ծանոթագրություն 37. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն») Կենտրոնական բանկի կողմից բանկերի համար հաստատված ակտիվների հնարավոր կորուստների պահուստների կարգի համաձայն հաշվարկված պահուստների գումարները և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների տարրերի վրա:

5.4 Սույն գլխում՝ բանկի ակտիվները ըստ վարկանիշների խմբավորելիս, օգտագործված են Ստանդարտ և Փուրզ, Ֆիտչ, իսկ փակագծերում՝ Մուդիզ վարկանիշային գործակալությունների կողմից սահմանված վարկանիշները: Եթե միևնույն պահանջի դեպքում առկա է տարբեր վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված երկու տարբեր վարկանիշ, ապա բանկը ընտրում է ամենախիստը, իսկ երեք և ավելի վարկանիշների դեպքում՝ երկու ամենացածր ռիսկի կշիռներից առավել խիստը:

5.5 Սույն գլխով սահմանված ձևով բանկի ակտվները ըստ վարկանիշների դասակարգելիս, բանկերը հիմք են ընդունում վերը նշված վարկանիշային գործակալությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող վերջին թարմացված տվյալները՝ կախված պահանջների ժամկետայնությունից, գործիքների տեսակից և արժույթից:

## Գլուխ 6. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին տարեկան (միջանկյալ) հաշվետվությունը բաղկացած է երկու աղյուսակներից: Սեփական կապիտալում փոփոխությունների մասին տարեկան հաշվետվության I (առաջին) աղյուսակում ցույց են տրվում հաշվետու տարվան նախորդող տարվան վերաբերող տվյալները, II (երկրորդ) աղյուսակում` հաշվետու տարվա տվյալները: Բանկի սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվության I և II աղյուսակներում ցույց են տրվում, համապատասխանաբար, ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը և նախորդ տարվա մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի տվյալները:

6.2 1-ին աղյուսակի «1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի -------թ. » 1-ին տողում ըստ սյուների լրացվում է նախորդ տարվա (ժամանակաշրջանի) սկզբի դրությամբ.

1) 1-ին սյունակում` կանոնադրական կապիտալի մնացորդը,

2) 2-րդ սյունակում` բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերի հաշվեկշռային մնացորդը,

3) 3-րդ սյունակում` կանոնադրական կապիտալի զուտ գումարը (սյունակ 1 - սյունակ 2),

4) 4-րդ սյունակում` էմիսիոն եկամտի մնացորդը. էմիսիոն վնասը ցույց է տրվում փակագծերում,

5) 5-րդ սյունակում` գլխավոր պահուստի մնացորդը,

6) 6-րդ սյունակում` Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից,

7) 7-րդ սյունակում` վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների` իրական արժեքով վերաչափումից չիրացված շահույթների/վնասների և դրամական հոսքերի հեջավորման ածանցյալ գործիքների` իրական արժեքով վերաչափումից շահույթների/վնասների հանրագումարը: Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

8) 8-րդ սյունակում` դրամական հոսքերի հեջավորում,

9) 9-րդ սյունակում` ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ,

10) 10-րդ սյունակում` չբաշխված շահույթի (վնասի) գումարը (վնասը ցույց է տրվում փակագծերում),

11) 11-րդ սյունակում` հայտարարված միջանկյալ շահաբաժինների գումարի մնացորդը,

12) 12-րդ սյունակում` 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ սյունակների հանրագումարը,

13) 12-րդ սյունակում` չվերահսկվող բաժնեմաը, լրացվում է ընկերության կողմից համախմբված հաշվետվություններ ներկայացնելու դեպքում,

14) 13-րդ սյունակում` 12-րդ և 13-րդ սյունակների հանրագումարը:

6.3 «1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը» տողի «Չբաշխված շահույթ» սյունակում արտացոլվում է ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի հիմնական մոտեցման համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության և հաշվետու տարում հայտնաբերված նախորդ տարիներին վերաբերող էական սխալների ուղղման հետևանքով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտման գումարը: Նույն գումարը գրվում է «Ընդամենը» սյունակում: Բացասական լինելու դեպքում այս գումարը ներկայացվում է փակագծերում:

6.4 «2. Վերահաշվարկված մնացորդ» տողի «Չբաշխված շահույթ» սյունակում գրվում է «1. Մնացորդը առ 1 հունվարի ------ թ.» տողի «Չբաշխված շահույթ» սյունակի և «1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտում» տողի «Չբաշխված շահույթ» սյունակի տվյալների հանրագումարը կամ տարբերությունը: Մնացած սյունակներում լրացվում են «Մնացորդը առ 1 հունվարի ------- թ.» տողի տվյալները:

6.5 «3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում` » տողում լրացվում են.

1) 1-ին սյունակում` կանոնադրական կապիտալի ձևավորման, բաժնետոմսերի (բաժնեմասերի) թողարկման ու կանոնադրական կապիտալի այլ աճի կամ նվազման (սեփական կապիտալի այլ տարրերի

հաշվին) և հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի) մարման հետևանքով կապիտալի նվազման տարբերությունը (բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում),

2) 2-րդ սյունակում՝ բաժնետոմսերի (բաժնեմասերի) հետ գնման հետևանքով ու հետ գնված կապիտալի այլ աճի և հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի) վաճառքի ու հետ գնված կապիտալի այլ նվազման տարբերությունը (բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում),

3) 3-րդ սյունակում՝ 1-ին և 2-րդ սյունակների տարբերությունը (բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում),

4) 4-րդ սյունակում՝ կանոնադրական կապիտալի ձևավորման, բաժնետոմսերի (բաժնեմասերի) հետագա թողարկման, հետ գնված բաժնետոմսերի վաճառքի, մարման, էմիսիոն եկամտի հաշվին կանոնադրական կապիտալի աճի հետևանքով էմիսիոն եկամտի աճի և նվազման տարբերության գումարը,

5) 5-րդ սյունակում՝ գլխավոր պահուստի հաշվին կանոնադրական կապիտալի աճի և բանկի սեփականատերերի հետ այլ գործարքների հետևանքով գլխավոր պահուստի աճի և նվազման տարբերության գումարը,

6) 10-րդ սյունակում՝ չբաշխված շահույթի հաշվին կանոնադրական կապիտալի աճի և բանկի սեփականատերերի հետ այլ գործարքների հետևանքով չբաշխված շահույթի աճի և նվազման տարբերության գումարը,

8) 12-րդ սյունակում՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ և 10-րդ սյունակների հանրագումարը:

3.1, 3.2 տողերում ներառված են 4-րդ տողում արտացոլված գումարների բացվածքը՝ ըստ կանոնադրական կապիտալի աճի և նվազման: Հաշվետվությունը կազմելիս կարող են բացվել տվյալ բանկի համար էական այլ հոդվածների համար լրացուցիչ տողեր՝ լրացնելով հոդվածի անվանումը և գումարը:

6.6 «4. Համապարփակ եկամուտ» տողի 8-րդ և 11-րդ սյունակներում ցույց է տրվում համապարփակ եկամուտների տարր հանդիսացող հոդվածների փոփոխության գումարը:

6.7 «5. Շահութաբաժիններ» տողում ցույց է տրվում.

1) 5-րդ սյունակում՝ շահութաբաժինների (արտոնյալ բաժնետոմսերի գծով) հայտարարման հետևանքով գլխավոր պահուստի նվազման գումարը,

2) 10-րդ սյունակում՝ շահութաբաժինների հայտարարման հետևանքով չբաշխված շահույթի նվազման գումարը,

3) 11-րդ սյունակում՝ 9-րդ սյունակում՝ հայտարարված և մարված միջանկյալ շահութաբաժինների գումարների տարբերությունը,

4) 12-րդ սյունակում՝ 5-րդ, 10-րդ և 11-րդ սյունակների հանրագումարը:

6.8 «6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝» տողի սյունակներում ցույց են տրվում սեփական կապիտալի տարրերի այլ ավելացումներն ու նվազեցումները: Հաշվետվությունը կազմելիս այս բաժնում կարող են բացվել տվյալ բանկի համար էական այլ հոդվածների համար լրացուցիչ տողեր՝ լրացնելով հոդվածի անվանումը և գումարը:

«7. Ներքին շարժեր, այդ թվում՝» տողում ցույց է տրվում սեփական կապիտալի տարրերի միջև շարժերը:

7.1, 7.2, 7.3, 7.4, 7.5 տողերում ներառված են 8-րդ տողում արտացոլված գումարների առավել էական հոդվածները: Հաշվետվությունը կազմելիս կարող են բացվել տվյալ բանկի համար էական այլ հոդվածների համար լրացուցիչ տողեր՝ լրացնելով հոդվածի անվանումը և գումարը:

6.9 8-րդ տողում լրացվում են բոլոր սյունակների հանրագումարները:

6.10 9-ից 16-րդ տողերը լրացվում են նույն սկզբունքով, ինչ որ 1-ից 8-րդ համապատասխան տողերը:

## Գլուխ 7. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

7.1 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կարող է կազմվել ուղղակի մեթոդով, ըստ որի՝ ներկայացվում են համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական տեսակները: Այն արտացոլում է հաշվետու ժամանակաշրջանում բանկի դրամարկղում և բանկային հաշիվներում գործառնական, ներդրումային, ֆինանսական գործունեությունից (ներառյալ՝ արտասովոր դեպքերից) Հայաստանի Հանրապետության արժույթի և արտարժույթի, դրամական միջոցների համարժեքների (այսուհետ՝ դրամական միջոցներ) մուտքերը և ելքերը, հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և վերջի մնացորդները, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքային տարբերությունների հետևանքով դրամական միջոցների և դրամական միջոցների համարժեքների աճը կամ նվազումը:

7.2 «Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից» բաժնում արտացոլվում են բանկի հիմնական գործունեության, ինչպես նաև այլ գործունեության, բացառությամբ՝ ներդրումային և ֆինանսական գործունեության հետ կապված դրամական զուտ հոսքերը:

7.3 «Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից» բաժնում արտացոլվում են երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումից առաջացած զուտ հոսքերը, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ:

7.4 «Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից» բաժնում արտացոլվում են այն գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերը, որի հետևանքով տեղի են ունենում բանկի սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխություններ:

7.5 Դրամական հոսքերը, որոնք առաջացել են արտարժույթով կատարված գործառնությունների հետևանքով, ներկայացվում են բանկի հաշվետվական արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով հաշվետվական արժույթի և արտարժույթի միջև դրամական միջոցների հոսքերի օրվա դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը:

7.6 Դրամական հոսքերի տարեկան հաշվետվության 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, նախորդ և հաշվետու ժամանակաշրջանների տվյալները: Եթե բանկը կազմում է միջանկյալ հաշվետվություն, ապա 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը և նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանների տվյալները:

7.7 «Ստացված տոկոսներ» տողում ներկայացվում են թղթակցային հաշիվների, ներդրված ավանդների, տրամադրված վարկերի, ռեպո համաձայնագրերի, ակրեդիտիվների, ներդրումների և այլ գործառնությունների դիմաց փաստացի ստացված տոկոսային եկամուտները:

7.8 «Վճարված տոկոսներ» տողում ներկայացվում են թղթակցային և բանկային հաշիվների, ներգրավված ավանդների, ստացված վարկերի, ռեպո համաձայնագրերի և այլ պարտավորությունների դիմաց բանկի կողմից վճարված տոկոսային ծախսերը:

7.9 «Ստացված կոմիսիոն գումարներ» տողում ներկայացվում են բանկի կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստացված գումարները:

7.10 «Վճարված կոմիսիոն գումարներ» տողում ներկայացվում են այլ կազմակերպության կողմից բանկին մատուցված ծառայությունների դիմաց վճարված գումարները:

7.11 «Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)» տողում ներկայացվում են առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից իրացված օգուտը/(վնասը):

7.12 «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)» տողում ներկայացվում են արտարժույթի առք ու վաճառքից իրացված օգուտները/(վնասները):

7.13 «Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ» տողում ներկայացվում է անհուսալի ճանաչված վարկերի, դեբիտորական պարտքերի, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վերականգնումից առաջացած դրամական ներհոսքը:

7.14 «Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ» տողում ներկայացվում են բանկի աշխատողներին վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների գումարները:

7.15 «Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր» տողում ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանում գործառնական գործունեությունից ստացված այն եկամուտները և վճարված այն ծախսերը (ավանդների ապահովագրումը, տույժերի, տուգանքների, կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսումները և գործառնական գործունեություն հանդիսացող այլ գործառնությունների դրանցից ստացվող զուտ գումարները), որոնք չեն ընդգրկվել «Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից» բաժնի այլ տողերում:

7.16 «Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում)» տողում ներկայացվում են բանկի կողմից թանկարժեք մետաղների, առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի ներդրումների, ածանցյալ ֆինանսական ակտիվների, առևտրային բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին և հաճախորդներին տրամադրված վարկերի, ներդրված ավանդների և ռեպո համաձայնագրերի, ֆինանսական վարձակալության և այլ գործառնական ակտիվների դիմաց վճարված, ինչպես նաև դրանց վերադարձի զուտ գումարները: Այս տողին հաջորդող տողերում արտացոլվում են գործառնական ակտիվների էական հոդվածները:

7.17 «Վարկերի և փոխատվությունների նվազում/(ավելացում)» տողում ներկայացվում են բանկի կողմից հաճախորդներին տրամադրված վարկերը և փոխատվությունները, ռեպո համաձայնագրերը, ինչպես նաև դրանց մարման զուտ գումարները:

7.18 «Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)» տողում ներկայացվում են առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի (այդ թվում՝ ֆակտորինգի) նվազման և ավելացման դիմաց ստացված զուտ գումարները: Եթե այս հոդվածը էական չէ առանձին բացահայտման համար, ապա այն արտացոլվում է «այլ գործառնական ակտիվների նվազում/ (ավելացում)» տողում:

7.19 «Ֆինանսական վարձակալության դիմաց ստացվելիք գումարների նվազում (ավելացում)» տողում ներկայացվում են վարձատուի կողմից տրամադրված ակտիվի դիմաց ստացված գումարները: Եթե այս

հոդվածը էական չէ՝ առանձին բացահայտման համար, ապա այն արտացոլվում է «այլ գործառնական ակտիվների նվազում/ (ավելացում)» տողում:

7.20 «Այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)» տողում ներկայացվում են հավատարմագրային կառավարման, երաշխիքներով և հոժարագրերով, ակրեդիտիվներով, չեկերով և այլ հաշվարկային փաստաթղթերով, այլ գործառնական գործառնությունների արդյունքում առաջացող ակտիվների նվազման և ավելացման զուտ գումարները:

7.21 «Գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)» տողում ներկայացվում են բանկի գործառնական գործունեությունից ստանձնած պարտավորությունների դիմաց ստացված, ինչպես նաև այդ պարտավորությունների մարման համար վճարված զուտ գումարները: Այս տողին հետևող տողերում արտացոլվում են գործառնական պարտավորությունների էական հոդվածները:

7.22 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)» տողում ներկայացվում են մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի (այդ թվում՝ ֆակտորինգի) նվազումից և ավելացումից առաջացած դրամական միջոցների հոսքերը:

7.23 «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)» տողում ներկայացվում են ասոցիացված կազմակերպություններում, համատեղ վերահսկվող միավորներում, դուստր կազմակերպություններում ներդրումների նվազումից և ավելացումից առաջացած դրամական միջոցների հոսքերը:

7.24 «Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)» տողում ներկայացվում են բանկի կողմից հիմնական միջոցներում, ոչ նյութական ակտիվներում, ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների միջոցով առաջացած դրամական միջոցների հոսքերը:

7.25 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում» տողում ներկայացվում է բանկի կողմից հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար վճարված դրամական միջոցների արտահոսքը:

7.26 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում» տողում ներկայացվում է բանկի կողմից հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից առաջացած դրամական միջոցների ներհոսքը:

7.27 «Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից» տողում ներկայացվում են կանոնադրական կապիտալի համալրման հաշվում դրամական միջոցների կուտակումը, բռնագանձված գրավի ձեռքբերում/օտարում, ներդրումային գործառնություն հանդիսացող այլ գործառնություններից առաջացած դրամական միջոցների հոսքերը:

7.28 «Վճարված շահաբաժիններ» տողում ներկայացվում են բանկի կողմից բաժնետերերին վճարված շահաբաժինների գումարները:

7.29 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)» տողում ներկայացվում են բանկին Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի կողմից տրամադրված վարկերի, ռեպո համաձայնագրերի ավելացումից և նվազումից առաջացած դրամական միջոցների հոսքերը:

7.30 «Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)» տողում ներկայացվում են բանկին այլ բանկերից տրամադրված վարկերի, ռեպո համաձայնագրերի ավելացումից և նվազումից առաջացած դրամական միջոցների հոսքերը:

7.31 «Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)» տողում ներկայացվում են բանկին այլ ֆինանսական կազմակերպությունների կամ այլ կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի, ռեպո համաձայնագրերի ավելացումից և նվազումից առաջացած դրամական միջոցների հոսքերը:

7.32 «Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)» տողում ներկայացվում են բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց ստացված դրամական միջոցների հոսքերը:

7.33 «Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում» տողում ներկայացվում են կանոնադրական կապիտալում բաժնետերերի ներդրումներից առաջացած դրամական միջոցների հոսքերը:

7.34 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարները» տողում ներկայացվում են վարձակալի կողմից ստացված ակտիվի դիմաց վճարված գումարները:

7.35 «Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից» տողում լրացվում են բանկի կողմից սեփական բաժնետոմսերի հետգնման համար վճարված գումարները, կանոնադրական կապիտալի համալրման համար միջոցների ներգրավումը և ֆինանսական գործունեություն հանդիսացող այլ գործառնությունների դիմաց դրամական հոսքերը:

7.36 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա» տողում ներկայացվում է արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա:

7.37 «Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)» տողում ներկայացվում է «Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից», «Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից» և «Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից» տողերի հանրագումարը:

7.38 «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում» տողում ներկայացվում են կանխիկ և կանխիկին հավասարեցված միջոցները ժամանակաշրջանի սկզբում:

7.39 «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում» տողում ներկայացվում են կանխիկ և կանխիկին հավասարեցված միջոցները ժամանակաշրջանի վերջում:

7.40 Որպես այլընտրանքային տարբերակ բանկը կարող է կազմել դրամական հոսքերի մասին հաշվետվությունը անուղղակի մեթոդով՝ կազմերպության շահույթը ճշգրտելով այն գումարների չափով, որոնք մասնակցել են տվյալ ժամանակաշրջանի շահույթի հաշվարկում, սակայն դրամական միջոցների հոսքեր չեն արտահայտում և այն գումարների չափով, որոնք արտահայտում են դրամական միջոցների հոսքեր տվյալ ժամանակաշրջանի համար, սակայն չեն մասնակել շահույթի

հաշվարկում: Յաշվետվության 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են 1-ին սյունակում թվարկված հոդվածների գումարները՝ համապատասխանաբար նախորդ և հաշվետու ժամանակաշրջանների համար:

## ԳԼՈՒԽ 8. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Քանի որ սույն հրահանգով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների նոր ձևերում հոդվածների ներկայացումը/դասակարգումը փոփոխված է, համադրելի գումարները պետք է վերադասակարգվեն (բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումը գործնականում աննպատակահարմար է):

8.2 Այն դեպքերում, երբ գործնականում աննպատակահարմար է վերադասակարգել համեմատելի գումարները, բանկը բացահայտում է վերադասակարգում չկատարելու պատճառը, ինչպես նաև այն փոփոխությունների բնույթը, որոնք տեղի կունենային գումարների վերադասակարգումն իրականացնելու դեպքում: Սույն հրահանգի իմաստով՝ վերադասակարգումը գործնականում համարվում է աննպատակահարմար, եթե նախորդ ժամանակաշրջանում (ժամանակաշրջաններում) հաշվառումը տարվել է այնպես, կամ կարող է տվյալները հավաքագրված չլինեն այն ձևով, որ վերադասակարգման հնարավորություն տան, և կարող է աննպատակահարմար լինել այդ տվյալների վերաստեղծումը (վերականգնումը): Այս դեպքերում բացահայտվում է այն համադրելի գումարների ճշգրտումների բնույթը, որոնք պետք է կատարվեին:

8.3 Համադրելի տեղեկատվության գծով պահանջվող ճշգրտումները, որոնք առաջանում են հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները հետընթաց եղանակով կիրառելուց, իրականացվում են համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի:

**Հավելված 5**

**Հաստատված է**
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշմամբ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ձև թիվ 5)**

1. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝

1) ներկայացնում են ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու հիմունքները, ինչպես նաև ընտրված և էական գործառնությունների ու իրադարձությունների նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվություն.

2) բացահայտում են հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվող տեղեկատվությունը, ինչը ներկայացված չէ ֆինանսական հաշվետվությունների ձևերում:

2. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ինչպես թվային, այնպես էլ պատմողական և նկարագրական տեղեկատվության գծով բացահայտվում է նախորդ ժամանակաշրջանին վերաբերող համադրելի տեղեկատվությունը:

3. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները ներառում են՝

3.1 Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»

Այս ծանոթագրությունում բացահայտվում են բանկի կազմակերպական-իրավական ձևը և բանկի վերաբերյալ ՀՀՄՍ 1-ով սահմանված այլ տեղեկատվություն: Տեղեկությունները ներկայացվում են ըստ հետևյալ բաժինների՝

3.1.1. Իրավական դաշտ.

1) բանկի հիմնական գործունեությունը,

2) գործարար միջավայրը,

3) եթե բանկը խմբի անդամ է, ապա խմբի իրավական կառուցվածքը:

3.1.2. Կորպորատիվ կառավարում.

1) խորհրդի կառուցվածքը, կազմը,

2) տնօրինության կառուցվածքը, կազմը,

3) սեփականության կառուցվածքը, բաժնետերերի/մասնակիցների քանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջում,

4) նշանակալից մասնակիցների անունները/անվանումները,

5) ղեկավարների վարձատրության քաղաքականությունը,

6) արտաքին աուդիտին վճարները:

3.2 Ծանոթագրություն 2. «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»

Այս ծանոթագրությունում բանկը բացահայտում է բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ առնվազն հետևյալ հոդվածների վերաբերյալ.

1) ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը,

2) համախմբման սկզբունքները (համախմբման դեպքում),

3) եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը,

4) արտարժութային գործառնությունների հաշվառումը,

5) հարկեր (ընթացիկ և հետաձգված),

6) ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը,

7) դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացահայտում են այն քաղաքականությունը, որը կիրառվում է դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը որոշելիս),

8) առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ,

9) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,

10) ռեպո համաձայնագրերով գործառնություններ,

11) ածանցյալ ֆինանսական գործիքներ,

12) վարկեր և փոխառություններ՝ բանկերին, հաճախորդներին,

13) վարկերի և այլ փոխատվությունների արժեզրկման գծով կորուստների որոշման և անհուսալի վարկերի և այլ փոխատվությունների դուրսգրման հիմունքը,

14) տոկոսների հաշվեգրման դադարեցումը,

15) մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հաշվառումը,

16) հեջի հաշվապահական հաշվառումը,

17) ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումների հաշվառումը,

18) հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ,

19) բանկերի և հաճախորդների միջոցներ,

20) բանկի կողմից թողարկված պարտքային արժեթղթեր,

21) տարբերակումը այն գործառնությունների և իրադարձությունների, որոնք հանգեցնում են հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը, այն գործառնություններից և իրադարձություններից, որոնք առաջացնում են միայն պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ,

22) ընդհանուր բանկային ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը,

23) կապիտալ և էմիսիոն եկամուտ,

24) փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը,

25) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը,

26) ֆինանսական ակտիվների վերադասակարգումները,

27) տեղեկատվություն սեգմենտների վերաբերյալ:

Ծանոթագրություն 2-ում պարտադիր բացահայտվում են կազմված ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներին և բանկի խորհրդի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

3.3 Ծանոթագրություն 3. «Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

Ծանոթագրություն 3-ը ներկայացնում է տոկոսային և նմանատիպ եկամտի, ծախսերի հիմնական տարրերը.

| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից | | |
| Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից | | |
| Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից | | |
| Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից | | |
| Այլ տոկոսային եկամուտ | | |
| Ընդամենը | | |

| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց | | |
| Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց | | |
| Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց | | |
| Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց | | |

| | |
|---|---|
| Այլ տոկոսային ծախսեր | |
| Ընդամենը | |
| <u>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</u> | |

3.4 Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

Ծանոթագրություն 4-ը ներկայացնում է կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների և ծախսերի հիմնական տարրերը.

| <u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</u> | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| Դրամարկղային գործառնություններից | | |
| Հաշվարկային ծառայություններից | | |
| Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից | | |
| Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից | | |
| Վճարային քարտերի սպասարկումից | | |
| Այլ կոմիսիոն վճարներ | | |
| Ընդամենը | | |

| <u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</u> | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ | | |
| Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ | | |
| Երաշխիքների, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնությունների, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ | | |
| Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից | | |
| Այլ կոմիսիոն վճարներ* | | |

| | |
|---|---|
| Ընդամենը | |
| <u>Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ</u> | |

* Եթե այս տողը էականորեն մեծ է, ապա բացահայտվում են եկամտի գոյացման աղբյուրները:

3.5 Ծանոթագրություն 5. «Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից»

Ծանոթագրություն 5-ը ներկայացնում է առևտրային գործառնություններից զուտ եկամուտների հիմնական տարրերը.

| <u>Առևտրային նպատակներով պահվող ներդրումներից</u> | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| Առևտրային նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝ | | |
| բաժնետոմսերից | | |
| պարտքային արժեթղթերից | | |
| ածանցյալներից | | |
| Առևտրային նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ | | |
| Ընդամենը | | |

| <u>Վաճառքի համար մատչելի ներդրումներից</u> | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝ | | |
| բաժնետոմսերից | | |
| պարտքային արժեթղթերից | | |
| ածանցյալներից | | |
